ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » մարտի 2019 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Խ-021-25.02.2019-ՏՀ-011/0*) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի մարտի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 294 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*Խ-021-25.02.2019-ՏՀ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն լինելով նախագծի ընդհանուր գաղափարին (գյուղացիական տնտեսություններին աջակցությանը), այնուամենայնիվ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ նախագծի հիմնավորման մեջ նշված նպատակին անհրաժեշտ է հասնել այլ՝ առավել արդյունավետ ուղիներով և առաջարկում է գործող օրենքի հոդվածը թողնել անփոփոխ՝ հաշվի առնելով ստորև ներկայացված դիտողությունները.

1. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 224-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անշարժ գույքի հարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքի համար նույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:

Այս առումով, հայտնում ենք, որ թեև անվիճելի է այն հանգամանքը, որ բնակլիմայական աղետները հարկ վճարողի կամքից ու գործողություններից անկախ են, այդուհանդերձ նախագծով ներկայացված առաջարկությունը հակադրվում է սեփականության հարկման՝ վերոնշյալ տրամաբանությանը, որը հարկի գծով պարտավորության ծագման տեսանկյունից կարևորում է միայն հարկման օբյեկտի և դրա նկատմամբ սեփականության իրավունքի առկայությունը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 186-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ համայնքի պարտադիր խնդիրների լուծման նպատակով օրենքով սահմանվում են հարկային և ոչ հարկային այնպիսի աղբյուրներ, որոնք անհրաժեշտ են այդ խնդիրների իրականացումն ապահովելու համար: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով հարկային այդպիսի աղբյուրներ են համարվում անշարժ գույքի հարկն ու փոխադրամիջոցների գույքահարկը:

Միաժամանակ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 93-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով համայնքների եկամուտների նվազեցումը և ծախսերի ավելացումը պետք է օրենքով սահմանված կարգով փոխհատուցի պետությունը, բացառությամբ հարկային եկամուտների գծով օրենքով սահմանված դեպքերում հարկային պարտավորությունների դադարեցման (բացի հարկային արտոնությունների տրամադրումից և հարկի վերացումից) և օրենքով սահմանված այլ դեպքերի: «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 81-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընդունած օրենքներով Երևանի եկամուտների նվազեցումը և ծախսերի ավելացումը պետք է փոխհատուցի պետությունը, բացառությամբ հարկային եկամուտների գծով օրենքով սահմանված դեպքերում հարկային պարտավորությունների դադարեցման (բացի հարկային արտոնությունների տրամադրումից և հարկի վերացումից) և օրենքով սահմանված այլ դեպքերի:

Հետևաբար, ներկայացված առաջարկության ընդունման արդյունքում համայնքի բյուջեների եկամուտների կորուստները ենթակա են ֆինանսավորման պետական բյուջեի միջոցների հաշվին:

Բացի դրանից, համայնքների սեփական եկամուտների նվազեցումը մի կողմից հակասում է «Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի» նախաբանին, որտեղ խարտիան վավերացրած երկրները, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունը, համակարծիք են, որ խարտիային միացած երկրներում տեղական ինքնակառավարման պաշտպանությունն ու ամրապնդումն իրենցից ներկայացնում են նշանակալից ներդրում ժողովրդավարական սկզբունքների և ապակենտրոնացված իշխանության վրա հիմնված պետության կառուցման գործում, մյուս կողմից էլ ավելի է մեծացնում պետական բյուջեի ծախսերի վրա ճնշումը: Վերջինս, մասնավորապես, պայմանավորված է այն հանգամանքով, որ պետական բյուջեն՝ բացի համայնքների սեփական եկամուտների կորուստների փոխհատուցմամբ պայմանավորված ծախսերի աճից, պետք է ավելացնի ֆինանսական համահարթեցման նպատակով տրամադրվող դոտացիաները, քանի որ

«Ֆինանսական համահարթեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ ֆինանսական համահարթեցումը, ի թիվս այլ գործոնների, հակադարձ կախվածության մեջ է համայնքների սեփական եկամուտների հետ: Արդյունքում, նախագծով առաջարկվող արտոնությունը կունենա կրկնակի բացասական ազդեցություն պետական բյուջեի ծախսերի վրա:

3. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության (այսուհետ՝ ԱՎԾ) «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի գյուղատնտեսական համատարած հաշվառման հիմնական արդյունքները» ժողովածուի 1-ին բաժնի 1-ին աղյուսակում նշված է, որ ֆիզիկական անձ գյուղացիական տնտեսությունները կազմում են 360,611 միավոր, որոնց պատկանող գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 513,000 հեկտար: Ստացվում է, որ մեկ գյուղացիական տնտեսությանը միջինում բաժին է ընկնում 1.42 հեկտար գյուղատնտեսական հող: Հաշվի առնելով, որ գյուղատնտեսական հողերի համար հողի հարկի հաշվարկային մեծությունը 2018 թվականին կազմել է 2.7 մլրդ դրամ՝ ստացվում է, որ գյուղացիական տնտեսությունների հողի հարկի տարեկան պարտավորությունը միջինում կազմել է շուրջ 7400 դրամ (1.42 հեկտար հողի համար) կամ 1 հեկտարի դիմաց 5263 դրամ: Մյուս կողմից, Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն՝ ամենաբարձր հաշվարկային զուտ եկամտաբերություն ունեցող գյուղատնտեսական նշանակության հողը Մերձ Արաքսյան գոտում գտնվող խաղողի պտղատու այգին է, որի 1 հեկտարի հաշվարկային զուտ եկամուտը կազմում է 423,300 դրամ, իսկ անշարժ գույքի հարկը Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 229-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ կազմում է տարեկան 63,495 դրամ: Ելնելով ԱՎԾ հրապարակած տվյալներից, որոնց համաձայն՝ 2018 թվականին 1 կգ խաղողի գինը կազմում էր 185 դրամ, իսկ 1 հեկտար խաղողի այգու միջին պտղատվությունը՝ 150 ցենտներ, ստացվում է, որ ամենաթանկ գյուղատնտեսական հողի 1 հեկտարի հաշվով անշարժ գույքի հարկը կազմում է այդ հողի միջին եկամտաբերության 2.3 տոկոսը

(63,495*100/185*15,000): Վերոհիշյալ հաշվարկների հիման վրա ակնհայտորեն կարելի է եզրակացնել, որ անշարժ գույքի հարկի գումարը կարող է բնակլիմայական աղետների հետևանքով գյուղացիական տնտեսությունների կրած վնասի աննշան տոկոսը կազմել: Այլ կերպ ասած՝ առաջարկվող հարկային արտոնության տրամադրումը տուժած տնտեսություններին օժանդակելու հարցում որևէ էական նշանակություն չի կարող ունենալ:

4. Նախագծով ներկայացված առաջարկությունը խնդրահարույց է նաև տնամերձ հողերի մասով, քանի որ եթե գյուղատնտեսական հողերի դեպքում նախագծի հեղինակների մտահոգությունը ինչ-որ առումով հասկանալի է, ապա տնամերձ հողերի համար պարզ չէ, թե արտոնության նախատեսումն ինչ նպատակ ունի:

5. Ներկայացված առաջարկությունը չարաշահումների ռիսկեր է ստեղծում: Մասնավորապես, առաջարկությունը ենթադրում է, որ այն դեպքում, երբ, օրինակ, 10 հեկտար գյուղատնտեսական հողից միայն 1 հեկտար տարածքն է օգտագործվել բերք ստանալու համար և աղետի հետևանքով այդ հողօգտագործողը ունեցել է բերքի 100 տոկոս կորուստ, հողի հարկից կազատվի ամբողջ 10 հեկտար գյուղատնտեսական հողը, ինչը տրամաբանական չէ:

6. Հասկանալի չէ, թե ինչպիսի հաշվարկների հիման է առաջարկվում առնվազն 50 տոկոս վնասվելու շեմը: Մասնավորապես, հասկանալի չէ, թե ինչպիսի հաշվարկներ են կատարվել, որոնց համաձայն՝ գյուղացիական տնտեսությունների ծախսերը կազմում են ակնկալվող եկամտի 50-60 տոկոսը:

7. Առաջարկությունը խնդրահարույց է նաև արդյունավետ վարչարարության իրականացման առումով, և հատկապես՝ տնամերձ հողերի մասով: Մասնավորապես, անհասկանալի է, թե Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 11-րդ բաժնի իմաստով լիազոր մարմին համարվող մարմիններից (անշարժ գույքի կադաստր վարող մարմին և հաշվառող մարմինները՝ տեղական ինքնակառավարման մարմիններ) որն է համարվելու նշյալ վնասները գնահատող մարմինը: Այս առումով, անհրաժեշտ է նշել, որ միայն Երևան քաղաքում առկա է ավելի քան 80 հազար

բնակելի տուն, որոնցից գրեթե բոլորն ունեն տնամերձ հողատարածք և պարզ չէ, թե ինչ ընթացակարգերով և ինչ կարողությունների հաշվին է իրականացվելու վնասի գնահատումը:

8. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ համայնքի ավագանին համայնքի ղեկավարի ներկայացմամբ և համայնքի ավագանու սահմանած կարգով կարող է սահմանել անշարժ գույքի հարկի գծով արտոնություններ և դրանց մասով կայացնել անշարժ գույքի հարկ վճարողի փոխարեն համայնքի բյուջեից վճարում կատարելու որոշումներ: Հետևաբար, եթե խնդիրը վնաս կրած գյուղացիական տնտեսություններին օժանդակելն է, ապա կարծում ենք, որ առավել նպատակահարմար է քննարկել համայնքների ավագանիների կողմից խնդրո առարկա դեպքերում հասցեական արտոնություններ տրամադրելու հնարավորությունների հարցը:

9. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսությունը բնակլիմայական տարբեր աղետների հետևանքով կրում է վնասներ (կարկտահարություն, ցրտահարություն, երաշտ, խորշակ և այլն), որոնց հաճախականությունը և տևողությունը վերջին տասնամյակներում կլիմայի փոփոխությամբ պայմանավորված՝ աճման միտում ունի: Վերջին տարիներին աղետների հասցրած ամենամյա վնասը գնահատվում է 12-15 մլրդ դրամ (բացառությամբ 2016 թվականի, երբ վնասը կազմեց 33.6 մլրդ դրամ): Ընդ որում, վնասի զգալի մասը բաժին է ընկնում կարկտահարությանը: Հաշվի առնելով վերոնշյալը՝ անհրաժեշտ է բնակլիմայական աղետների ռիսկերի նվազեցման ուղղությամբ իրականացնել համակարգված քաղաքականություն:

Այս առումով, գյուղատնտեսությանը բնակլիմայական աղետներից հասցվող վնասների կանխարգելման և տնտեսվարողներին աղետների հետևանքով պատճառված վնասների մեղմման նպատակով 2018 թվականից մեկնարկել է կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը, իսկ 2019 թվականին կմեկնարկի «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցություն» ծրագիրը:

Բացի դրանից, վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով կատարվել է բնակլիմայական աղետների հետևանքով պատճառված վնասների մասնակի փոխհատուցում հողի հարկի զիջման, ոռոգման ջրի վարձի մասնակի փոխհատուցման կամ սերմացուների տրամադրման ձևով: Նշված ձևաչափով փոխհատուցման չափը կազմել է վնասի 1.2-1.6 տոկոսը, իսկ 2018 թվականին՝ 50 տոկոսից ավելի վնասված 8479 հեկտար հողատարածքի համար ուղղակի հասցեական փոխհատուցում է տրվել տուժած հողօգտագործողներին: Այդ նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 29-ի N 1405-Ն և 2018 թվականի դեկտեմբերի 7-ի N 1422-Ն որոշումներով հատկացվել է 507.8 մլն դրամ, որը կազմում է վնասի շուրջ 5 տոկոսը:

Նախագծով ներկայացված առաջարկության ընդունման պարագայում նշված 8479 հեկտարը հողի հարկից ազատելու համար կպահանջվի շուրջ 117.3 մլն դրամ, որը մոտավորապես 4 անգամ պակաս է պետության կողմից 2018 թվականին ցուցաբերած աջակցությունից: Բացի դրանից, շատ կարևոր է նաև այն, որ հողի հարկի փոխհատուցումը հնարավորություն չի ստեղծում հաջորդ տարի ևս զբաղվել գյուղատնտեսությամբ, մինչդեռ ուղղակի աջակցությունը վնաս կրած տնտեսավարողին հնարավորություն է տալիս հաջորդ սեզոնին ներդրում կատարել գյուղատնտեսության մեջ և շահույթ ստանալով՝ մարել պարտավորությունները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մարտի 2019 թվականի N 294 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Արման Պողոսյանին նշանակել Ազգային ժողովում «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (*Խ-021-25.02.2019-ՏՀ-011/0*) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. մարտի 25
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Խ-021-25.02.2019-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 4-ի հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 17-րդ կետով.

«17) Գյուղատնտեսական նշանակության հողերը, տնամերձ եւ այգեգործական հողամասերը բնակլիմայական աղետների հետեւանքով (կարկուտ, երաշտ, ցրտահարություն եւ այլն) մշակաբույսերի, պտղատու այգիների առնվազն 50 տոկոս վնասվելու դեպքում, տվյալ տարվա համար»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հիմնավորում

ՀՀ Հարկային օրենսգրքում լրացում կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

Ընթացիկ իրավիճակը եւ առկա խնդիրները

Գյուղատնտեսությունում տնտեսվարողները զգալի կորուստներ են կրում տարբեր բնական աղետների (կարկուտ, երաշտ, ցրտահարություն եւ այլն) եւ անկանխատեսելի պատահարների հետեւանքով: ՀՀ կառավարության տվյալներով Հայաստանի Հանրապետությունում բնական տարբեր աղետներից՝ գարնանային ցրտահարություններից, կարկտահարությունից տարեկան վնասվում են 30-35 հազ. հեկտար գյուղատնտեսական մշակաբույսերի եւ բազմամյա տնկարկների տարածքներ, որը խիստ բացասաբար է անդրադառնում հողօգտագործողների հետագա գործունեության ու սոցիալական վիճակի վրա:

Յուրաքանչյուր տարի կարկուտի պատճառով վնասվում են հանրապետության այգետարածքների 10-15%-ը, որոշ դեպքերում կարկտահարված տարածքներում բերքի կորուստը կազմում է 80-100%: Կարկտահարությունից վնասված բերքը կորցնում է ապրանքային տեսքը, որի պատճառով դժվար է դառնում նաեւ դրա իրացումը, արդյունքում զգալիորեն նվազում է հողօգտագործողների եկամուտները:

Հայաստանի Հանրապետության շատ համայնքներում գյուղացին վաստակում է բացառապես հողագործությամբ: Իսկ հողօգտագործման պարագայում գյուղացու ծախսերը (պարարտանյութ, վար, ցանք, բերքահավաք եւ այլն) կազմում են ակնկալվող բերքից ստացվող գումարի 50-ից 60 տոկոսը, եթե բնական աղետի հետեւանքով վնասվում է բերքի առնվազն 50 տոկոսը, ապա բերքից ստացվող գումարը հազիվ է ծածկում հողօգտագործողի ծախսերը: Գործող «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում բնակլիմայական աղետի հետեւանքով հողօգտագործողի վնաս կրելու համար հողի հարկից ազատելու դրույթ, հետեւապես ստացվում է, որ բնակլիմայական աղետի հասցված վնասի դեպքում հողօգտագործող ֆիզիկական եւ իրավաբանական անձինք, հողից եկամուտ չստանալով հողի հարկ են վճարում:

Առաջարկվող լուծումները

Նախագծով առաջարկվում է ՀՀ հարկային օրենսգրքի «Անշարժ գույքի արտոնությունները» 230-րդ հոդվածը լրացնել նոր կետով, որով գյուղատնտեսական նշանակության հողերը, տնամերձ եւ այգեգործական հողամասերը բնակլիմայական աղետների հետեւանքով (կարկուտ, երաշտ, ցրտահարություն եւ այլն) առնվազն 50 % վնասվելու դեպքում գյուղատնտեսությամբ զբաղվող անձինք բնակլիմայական աղետի տարվա համար կունենան անշարժ գույքի հարկի արտոնություն:

Ակնկալվող արդյունքները

Օրենքի ընդունման արդյունքում արդարացված կլինի հողօգտագործողին վնաս կրելու տարվա համար ազատել հողի հարկից, քանի որ բնակլիմայական աղետների հետեւանքով հասցված վնասի դեպքում գյուղատնտեսությամբ զբաղվող անձանց օրենքի ուժով ազատելով վնասը կրելու տարվա համար հողի հարկ վճարելու պարտականությունից պետությունը ֆինանսական աջակցություն կցուցաբերի գյուղացուն: